

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓԱՍՏԱՔԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՍՆԱԿՑԵԼ Է ՓԱՍՏԱՔԱՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԻՆ

13.11.2018 11:21



Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի պատվիրակությունը մասնակցել է Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսիում կայացած միջազգային համաժողովին, որը կազմակերպել էին Վրաստանի փաստաբանների միությունը, Եվրոպայի խորհուրդը, ՄԱԿ-ի զարգացման ծրագիրը, Եվրոպայի փաստաբանների միությունը:

Համաժողովն անցկացվում էր «Փաստաբանի մասնագիտության բացառիկությունը» խորագրով:

Պատվիրակության կազմում էին փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը, խորհրդի անդամներ՝ Սիմոն Բաբայանը, Սեդրակ Ասատրյանը և Տիգրան Խուրշուդյանը: Համաժողովին մասնակցել են Վրաստանի, Հայաստանի, Ֆրանսիայի, Ռուսաստանի, Ավստրիայի, Լեհաստանի, Ուկրաինայի, Բելառուսի, Ադրբեջանի, Թուրքիայի, փաստաբանական միությունների ներկայացուցիչները, ինչպես նաև Փաստաբանների Եվրոպական ասոցիացիայի նախագահ Մարիա Սլազակը:

Համաժողովին շոշափվել են փաստաբանական ինստիտուտի վերաբերող մի շարք կարևորագույն հարցեր: Մասնավորապես՝

- փաստաբանի մասնագիտության բացառիկությունը.
- իրավաբանական ծառայությունների պաշտպանությունը.
- փաստաբանի մասնագիտությունն մուտք գործելու Եվրոպական ստանդարտները և առաջատար փորձը.
- փաստաբանական միությունների և անհատ փաստաբանների դերը անվճար իրավաբանական ծառայությունների ապահովման գործընթացում.
- փաստաբանի մասնագիտության վերաբերյալ Եվրոպական կոնվենցիայի ստեղծման տեսլականը:

Նշված հարցերի շրջանակներում հայաստանյան պատվիրակությունը ներկայացրել է ՀՀ փաստաբանների պալատի և Փաստաբանական դպրոցի փորձը: Հերթական անգամ հատուկ ուշադրության է արժանացել փաստաբանի մասնագիտությունն մուտք գործելու հայաստանյան ընթացակարգերը և Փաստաբանական դպրոցի գործունեությունը: Այս մասով քննարկվել է նաև

Հայաստանի և Վրաստանի միջև փորձի փոխանակման հնարավորությունը:

Համաժողովի առանցքային հարցն է հանդիսացել փաստաբանի մասնագիտության վերաբերյալ եվրոպական կոնվենցիայի ստեղծման հեռանկարը:

Միջազգային մի շարք հեղինակավոր փորձագետների կողմից ներկայացվել է փաստաբանի մասնագիտության կոնվենցիոն կարգավորման անհրաժեշտությունը: Զուգահեռներ են անցկացվել այլ մասնագիտությունների հետ, որոնք ունեն համապատասխան կարգավորում:

Քննարկումների արդյունքում, համաժողովի ավարտին մասնակիցների միաձայն որոշմամբ ընդունվել է միասնական դիմում-հայտարարություն՝ Փաստաբանի մասնագիտության վերաբերյալ եվրոպական կոնվենցիայի ստեղծմանն օժանդակելու մասին:

Փաստաբանների համաժողովում ընդունվել են նաև հետևյալ հայտարարությունները՝

- «Պետությունը իր քաղաքացիներին պարտավոր է ապահովել արդարադատության մատչելիությամբ՝ երաշխավորելով, որ բոլոր քաղաքացիները, ովքեր ունեն ֆինանսական դժվարություններ պետք է հնարավորություն ունենան փաստաբանի միջոցով ստանալու պրոֆեսիոնալ իրավաբանական խորհրդատվություն և ներկայացուցչություն:

Այսպիսով.

1. փաստաբանների պալատը պետք է աջակցի կառավարության կողմից իրավաբանական օգնության ծրագրերի ընդլայնմանը
2. փաստաբանների պալատի կողմից պետք է մշակվեն անվճար իրավաբանական օգնության (pro bono) տրամադրման ձևաչափեր.
3. փաստաբանների պալատը պետք է կառավարությունում հանդես գա անվճար իրավաբանական ծառայություն մատուցած փաստաբանին փոխհատուցում տրամադրելու նախաձեռնությամբ (օր. հարկային բեռի թեթևացում):

- Վստահորդի լավագույն շահը պահանջում է, որ իրավաբանական օգնությունը տրամադրվի փաստաբանների միջոցով, որովհետև՝

1. փաստաբանների անկախությունը,

մասնագիտական կոնֆիդենցիալությունն (փաստաբանական գաղտնիքը) երաշխավորվում է օրենքով,

2. փաստաբաններն ունեն մասնագիտական կրթություն և անցնում են պարբերական վերապատրաստումներ,

3. փաստաբանները գործում են վարքագծի կանոնագրքի համաձայն, որը վերահսկվում է փաստաբանների պալատի կողմից: Վերջինս կարող է կիրառել կարգապահական տույժեր, եթե փաստաբանների կողմից խախտվում են փաստաբանի վարքագծի կանոնագրքի դրույթները,

4. փաստաբանների մասնագիտական գործունեության պատասխանատվությունը, որպես կանոն երաշխավորվում է:







```
վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })
```